Թ. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 27 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1906 — ԹԻՒ 849

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր. վեցամսեայ 7 "

Արտասահմանի համար տարեկան 15 ֆր. վեցամսեայ 8 «

Ամերիկայի համար տարեկան 3 տոլ. վեցամսեայ 1.50 «

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. Երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կ'ըլլայ:

—o—

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ է

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

«ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Արդէն այս անունով մի բրօշիւր յանձնված է տպագրութեան.

Բրօշիւրի նպատակն է, առանց խծբծանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միևնոյն ժամանակ փաստել թէ՝ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց. Բնական է որ բրօշիւրի մէջ փաստող դօկիւմանները մեծ տեղ պիտի գրաւեն.

Բրօշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր.

Դիմել «Շարժում»ի Խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գտնուի Վիէննա Ֆրանց Ժօզէֆ քարափին վրայ. կը ստանայ զանազան հայերէն թերթեր. Սա հասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն. Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները.

ԿՐԿԻՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿՈՉԻ ՄԱՍԻՆ

Անցեալ անգամ կարճօրէն պարզեցինք այդ կոչի էական կէտերը որոնք, անուղղակի կերպով ձաղկում էին Դաշնակցութեան ներկայ կացութիւնը և պահանջներ դրվում առ հասարակ հայ յեղափոխականների և հայ անհատների առջեւ. Այժմ ուզում ենք նոյն կոչի մի երկու կէտի վրա խօսել.

Անդրանիկը զինուորներից, նոյն իսկ խմբապետներից պահանջում է լրագրական վիճաբանութեան լաբիրինթոսի մէջ չը մտնել. աւելցնելով հետեւեալ տողերը՝ — «Զէնքային գործը պիտի ըլլայ իր զէնքը ու փամփուշտը, և նպատակը հայրենիքի փրկութիւնը՝ որուն 16 տարի է որ կեանքը առաջնորդ եղած է. չեմ ըսեր որ համր ու խուլ ըլլայ անիկա, բայց ընտանեկան վէճերն ու խնդիրները կարելի է միշտ օրինաւոր ճամբով կարգադրել»։

Այդ պահանջը զինուորներից և խմբապետներից շատ իրաւացի է. բայց այն պարագային երբ իրօք նրա զէնքն ու փամփուշտը ծառայեցնել են տալիս հայրենիքի օգտին և օրինաւոր միջոցներով կարելի է ընտանեկան ներքին վէճերը կարգադրել. Սակայն երբ խմբապետի և զինուորի զէնքն ու փամփուշտը գործադրվել է հայ եղբօր հանդէպ, ու երբ գիտակից զինուորների ու խմբապետների ներքին բողոքները օրինաւոր ճամբով չեն կարգադրվում, այսինքն երբ զինուորական ուժի բիւրօկրատ վարիչները իրանք օրէնքից դուրս են գալիս, բողոքով հրապարակ նետվող զինուորը կամ խմբապետը յանդիմանութեան արժանի չէ. Եթէ Անդրանիկի ուղղութեամբ դատենք, այն ժամանակ Ռուսաստանի բոլոր ապստամբ զինուորները և հրամանատարները դատապարտելի են. Եթէ զինուորին և խմբապետին արգիլվէր դառն և [illegible] իրականութիւնների մասին հրապարակով բողոքել, այնժամանակ Անդրանիկն էլ երբ յեղափոխական զինուորականութեան ներկայացուցիչ հէնց ինքը իր քարոզածին հակառակ վարված պէտք է լինի իր այդ կոչովը հրապարակ գալով...

Այն ինչ որ արգիլվում է զինուորական տեսակէտից զինուորական միջակ պաշտօնեային, արգիլվում է և բարձրագոյն պաշտօնեային... Այն ինչ որ ըմբոստացուցիչ է բարձր գիտակից պաշտօնեայի համար, ըմբոստացուցիչ է և ստորին պաշտօնեայի համար, մանաւանդ երբոր գործը վերաբերում է յեղափոխական զինուորներին և ոչ թէ կազարմաներում ոչխարի պէս բռնի հաւաքած զինուորներին. Երբեք չը պէտք է մոռանալ որ գաղտնի բողոքները ախտաւորված կազմակերպութիւնների մէջ միշտ խեղդվում են և արդիւնք չը տալուց զատ՝ բողոքողները զանազան ինտրիգներով չէզոքացվում են. Հայ յեղափոխական զինուորը՝ բացի զինուոր լինելուց և ազատ քաղաքացի է ու նա իրաւունք ունի խառնելու հայ կեանքի բոլոր գործերին այնչափ, որչափ որ և է յեղափոխական բարձր դիրք ունեցող անհատ. Անդրանիկը զինուորներին այդ թելադրութիւնը արած միջոցին զուգընթացաբար պէտք էր թելադրէր և նրանց բիւրօկրատ վարողներին.— գործերը այնպէս պէտք է վարել, կազմակերպութիւնները այնպիսի հիմերի վրայ պէտք է դնել, որ հայրենիքին նւիրված յեղափոխական զինուորը ստիպված չը լինի հրապարակ գալ և մամուլի միջոցով բողոքել.

Մի ուրիշ կէտ այդ կոչի մէջ որ մութ կերպով է արտայայտուած՝ որը ընդհակառակը շատ որոշ պէտք է լինէր.

—«Զգուշացէք, ականջ մի կախէք կարգ մը թերթերու այն պրօպականդին, որոնք մասնաւոր ճիգ մը ունին մեր մտքերը պղտորելու. Այսօրուան այդ քսողիչները՝ որոնք կը ճգնին մեզի առաջնորդելու, խելք սորվեցնելու, անոնք կեանքի մէջ իսկապէս ոչ մէկ գործ ըրած ունին. ուր էի՞ն անոնք երէկ երբ հայրենիքի լեռներէն ու ձորերէն մենք զէնք զէնք կաղերսէինք»։

Այս կէտը մենք բացատրած էինք անցեալ անգամ որ Դաշնակցութեան վարիչներին է ակնարկում. Եւ ուրիշ բացատրութիւն էլ չէինք կարող տալ. որովհետեւ Անդրանիկը շատ լաւ գիտէ թէ՝ Դաշնակցութեան վարիչների տրամադրութեան տակ ահագին գումարներ էր դրված Սասունի վերջին դէպքից տարի ու կէս առաջ. բնական է որ այնուհետեւ Դաշնակցութեան էր մնում Անդրանիկների աղերսներին գոհացում տալ - ազգը և յեղափոխական մամուլը իր պարտականութիւնը կատարած էր հանդէպ կազմակերպութեան և կազմակերպութեան վարիչներն են թերացել իրենց պարտականութեանց մէջ դէպի Անդրանիկները, դէպի յուսահատական վայրկեաններ անցնող մարտիկները»

Անդրանիկի պէս դիրք ունեցող մարդիկ պէտք է որոշ լինեն իրենց յայտարարութիւնների մէջ. Աստուածաշնչային և աւետարանական ոճով չը պէտք է խօսել, որպէսզի ամէն մի քահանայ, պատուելի և պատեր իր հասկացած և գործին եկած ձեւով չը բացատրէ Քրիստոսի կամ մարգարէների ասածները. Անդրանիկի ասածները ի հարկէ մեզ համար շատ հասկանալի են և մենք երկու ձեռքով ստորագրում ենք դրանց տակը ու նրա մտքերի ոչ այնքան որոշ արտայայտութիւնը նրա անձնական նկատումներին չենք վերագրում. Բայց թող ներվի մեզ Սասունի արժանաւոր հրամանատարին նկատել թէ՝ հասարակական կեանքի մէջ վայրկեաններ կան որ որոշ յայտարարութիւններն են օգտակար և Դաշնակցութիւնը ներկայումս այնպիսի վայրկեաններ է անցնում որ նրա վերաբերմամբ միայն որոշ կերպով պէտք է արտայայտվել, առանց զանազան յեղափոխական պատուելիների զանազան բացատրութիւններ մէջ տեղ հանելու առիթը ստեղծելու. Դաշնակցու-

թիւնը, եթէ կուզէք և հայ ազատագրական գործը միայն այդ ձեւով կարող է փրկուել։

ՎԱՐԴՕ

ՀՐՍԻԷՐ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ

ՆԱՄԱԿ «ԴՐՕՇԱԿ»ԻՆ

Հայ ժողովրդի եւրոպացի բարեկամները հետեւում են լարուած հետաքրքրութեամբ Կովկասում տեղի ունեցող ողբերգական կռւին։ Առաջին կոտորածների լուրը՝ նրանք լսեցին տխրութեամբ և բերկրանք ունեցան՝ երբ լուր եկաւ այն յաղթական դիմադրութեան մասին, որ ցոյց տուեցին ասիական բարբարոսութեան՝ ձեր ժողովրդի քաջարի եւ գիտակից ներկայացուցիչները։

Գոյութիւնը մի կազմակերպուած ոյժի, զօրաւոր մի կուսակցութեան,— ենթակայ յեղափոխականապէս ճանաչուած դիսցիպլինի,— պէտք է նկատել իբրեւ մի իրական փրկութիւն ոչ միայն այդ կուսակցութեան, այլ նոյն իսկ կովկասեան ամբողջ հայ ժողովրդի համար. եւ ընդհանուր խառնակութեան մէջ, շաղկապուած արիւնով Հ. Յ. Դաշնակցութիւնը հանդէս եկաւ իբրեւ իսկական Տնօրէն երկրի մէջ, հանդէպ մի գարշելի կառավարութեան, այսօրուանից արդէն տկար՝ նոյնիսկ չարիք անելու գործում։

Սակայն դեռ կռիւը չը վերջացաւ, ինչպէս երեւում է, տատանումներ են նշմարւում մարտիկների շրջանում, և նրանք թուլարար ենթարկւում են ցաւալի տարաձայնութիւնների, նախ քան յաղթանակը տարած լինի։ Եւ այնտեղի լրագիրները մեզ հաղորդում են այդ ներքին տարաձայնութեան տխրացուցիչ լուրերը։

Եթէ տասն տարուց իվեր հայկական դատի պաշտպանութեան համար Եւրոպայում գործ դրած ջանքերը մեզ արտօնում են արտայայտելու մեր կարծիքն ու զգացմունքները, այդ դէպքում՝ մենք թախանձում ենք նրանց, որոնք առաջին անգամ ներշնչեցին երկրի ժողովրդին իր ոյժի գիտակցութիւնը, չ'ոչնչացնել սեփական ձեռքով իրենց գործը դեռ եւս անաւարտ։

Ցանկալի է խորապէս որ ոչ միայն բոլոր գործող կուսակցութիւնները համաձայնութեան գան՝ շաղկապուած ոյժերով մղելու ընդհանուր թշնամու դէմ սկսած կռիւը, այլ և անհրաժեշտ է,—կենսական անհրաժեշտութիւն,— որ գործօն կուսակցութեան ծոցում, նա որ ամենից ուժգին կերպով արտայայտեց իր կարողութիւնը՝ վերջին կռիւների ընթացքում,—միութիւնը չը խախտի նոյնիսկ մի վայրկեան։

Եթէ թիւրք և ռուս բռնապետութեան հայ զոհերը և անհաւասար կռւի մէջ ընկած հերոսները կարող լինէին մի վայրկեան դուրս գալ իրենց գերեզմաններից, նրանք առաջին պիտի երդւեցնէին իրենց կենդանի եղբայրներին՝ ապարդիւն չը դարձնել արեան անբաւ զոհերը եւ մնալ միացած՝ մինչեւ յաղթանակի օրը։ Նրանք կ'երդւեցնէին հրաժարուել անձնական մանր ընդհարումներից, կ'երդւեցնէին՝ ժամանակաւորապէս մի կողմ դնել նոյնիսկ սկզբունքային այն հարցերը որոնք կարող են պառակտում առաջացնել, և յետաձգել նրանց լուծումը մինչեւ այն օրը, երբ ձեռք բերուած կը լինի կատարեալ ազատութիւն։ Արդ, այդ ազատութիւնը դեռ եւս գոյութիւն չունի, եւ նրանք ցարդ բանտարկեալներ են որոնք տակաւին չեն փշրել իրենց բոլոր շղթաները։ Եւ թող մինչեւ վերջնական հարուածը՝ նրանք մնան միացած՝ ինչպէս եղան անցեալի մէջ։

Այդ է թելադրում բանականութիւնը, այդ է թելադրում այն հարճը, որին նուիրուած են բոլորը՝ վճռած զոհ բերել իրենց կեանքը, եւ որի առաջ պիտի անհետք չքանայ տարաձայնութեան ու պառակտման ոգին։

Եւ այսպէս խօսելով, ես արտայայտում եմ ոչ թէ անձնական մի կարծիք, այլ կարծիքը այն բոլոր Ֆրանսիացիների, որոնք բարեկամ են հայկական դատին, եւ առհասարակ ռուսական յեղափոխութեան ու Թիւրքիայի ազատագրութեան։

ՊԻԵՐ ՔԻՅԱՐ

Խմբագրապետ «Պրօ Արմէնիայի»

1906 սեպտ.

ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Զանազան մարդիկ, հիմնուած մի քանի լաքէների տարաձայնութեան վրա, մի քանիսն էլ անկախօրէն այն եզրակացութեան են եկել թէ՝ ես ուզում եմ Դաշնակցութեան մէջ հերձուած ստեղծել. Վարդօյական կուսակցութիւն և կամ թէ անցնել մի ուրիշ յեղափոխական կուսակցութեան մէջ Դաշնակցութիւնը տապալելու համար։ Աւելորդ չեմ համարում միանգամ ընդմիշտ վերջ տալ այդ անհիմն տարաձայնութիւններին։ Նախ իմ համոզումն է որ Դաշնակցութիւնը իր բոլոր թերութիւններով հանդերձ ամենազօրաւոր կուսակցութիւնն է ներկայումս։ Սակայն թէ իր այս ախտաւորուած վիճակի մէջ մնայ, նա էլ կընկնի ինչպէս միւսները ընկան և կընկնի անդառնալիօրէն։ Իմ պայքարը մեր կազմակերպութիւնը վերանորոգելու և անարժան չէֆերի ձեռքից կորզելու համար է։ Այդ նպատակի հասնելուց յետոյ՝ իմ տեղը կը լինի կռւի վայրում, գործնականապէս հաստատելու համար որ վտանգաւոր գործեր առաջարկողս ուրիշներին—ինքս եմ առաջինը նետւում։ Իսկ եթէ Դաշնակցութիւնը չը վերանորոգուեց, այդ միջոցին է միայն որ ես կը որոշեմ իմ դիրքը վերաբերմամբ իմ յեղափոխական գործունէութեան։

Դաշնակցութիւնը վերանորոգուելով կստեղծէ և հայ բոլոր յեղափոխական ուժերի համախմբութիւնը՝ եթէ ոչ միութիւնը։ Ու այդ միջոցին է որ պէտք է մեր յեղափոխական ուժերը բոլորը միասին խուժեն դէպի Երկիր այս կամ այն ձևի տակ։

Ես իբրեւ Դաշնակցական, հակառակ եմ դաշնակցական ներկայ կացութեանը՝ անգլուխ, անպոչ, առանց որոշ ուղղութեան և պարագլուխների մի խոշոր քանակութիւն սնուցանելու դրութեանը. ազատեցէք դաշնակցութիւնը այդ փտութիւնից և ես նրա հասարակ զինուորն եմ.... թողէք այդ դրութեան մէջ, նրա ամենաանհաշտ հակառակորդն եմ։ Ես խօսում եմ շատ որոշ կերպով, առանց մի մթին կէտ թողնելու։ Վերջ պէտք է տալ յեղափոխական շարլատանութեան.... կազմակերպութեան ղեկը պէտք է խլել սիրողների ձեռքից. կազմակերպութեան ղեկավարները պէտք է գտնուեն Երկրում. ոչ Թիֆլիզ—ոչ Ժնեւ և ոչ այլ տեղում։ Հրամանները երկրից պէտք է արձակել։ Արտասահմանը միայն նիւթական ուժ պէտք է մատակարարէ, առանց ոև է ձայն ունենալու երկրում կատարուելիք գործերի մասին։

Ռուսական Հայաստանը միայն ինքնապաշտպանութեամբ պէտք է զբաղի և այդ մասին իր ուժերով առանձին գումարներ պէտք է ստեղծէ. բայց ոչ տաճկահայ դատի համար հաւաքուած գումարները վատնի։ Հայերս Ռուսաստանի դէմ ապստամբել մտադիր չենք. իսկ Թուրքիոյ դէմ ապստամբական գործ կայ։

ՎԱՐԴՕ

«ՇԱՐԺՈՒՄԸ»

Շարժում ասելով՝ երբէք ինը կատի չունիմ մի որ և է կուսակցութեան, անհատի, ընկերութիւնների գործունէութիւնը, այլ «Շարժում» թերթը։

Ֆիլիպէի մէջ՝ հասակաւոր և երիտասարդ մեծ ոգեւորութեամբ մտնում են սրճարան, ստացուած թերթերը շուռ մուռ տալու։ Պէտք է ասել, որ հետաքրքրութիւնը բաւականաչափ զօրեղ է։ Բայց աւելի են հետապնդում, երբ «Շարժում»ի գալիք օրերն է լինում։

Մի անգամ մտայ սրճարան. բոլորի հետաքրքրութիւնը ուղղուած էր դէպի դուռը, սպասելու թէ երբ կը գայ «Շարժում»ը

ՄԱՆԻԱ

8

(Վէպ Հայ Յեղափոխ կեանքէ.)

Ե.

Պետրոսովի յեղափոխականների ձեռքից դուրս պրծնելու ժամից անցել էր երկու շաբաթ։ Նա ոչ միայն դրամ չէր վճարել, այլ եւ պատճառ էր դարձել մի քանի երիտասարդների ձերբակալման։ Մարգավազովը հոգեկան տանջանքի մէջ էր. ընկերների դրութիւնը շատ վատ էր. կային եւ բոլորովին անմեղներ, որոնց սպառնում էր կամ կախաղան եւ կամ թէ տաժանակիր աշխատանք Սիբերիոյ բանտերում։

—Գնալ եւ յայտնել որ ինքն է գործի հեղինակը, մտածում էր Մարգավազովը եւ իր այդ միտքը յայտնում ընկերներին։ Ի հարկէ ընկերները չէին թողնում։

Մարգավազովը խղճի խայթը կրծքում թաղված հեռացաւ դժբախտ վայրից ուր անհեթեթ մանկական ծրագրի անյաջողութեան պատճառով երիտասարդ ջահիլ ջիվաններ իրենց օրերն էին խաւարեցնելու Սիբերիոյ հանքերում, ու հեռացաւ նա քաղաքից միշտ ինքնիքը յանդիմանելով.

—Շարունակ Համլէթ եմ մնալու, հոգիս այրւում է, խիղճս թելադրում է գնալ եւ յայտնել իրողութիւնը կառավարութեան, ազատել այդ ծաղիկ երիտասարդներին, բայց չը կայ. կամքը պակասում է։

Ու իրօք Մարգավազովը կերպարանափոխուեց. նրա երեսում այլեւս ժպիտ չէր երեւում, յաւիտենական տխրութիւնը պատեց նրա մշտական ժպտուն դէմքին. մի քանի ամսում մազերը սպիտակեցին, ու նա ստացաւ երիտասարդ ծերի կերպարանքը։ Այդ հոգեկան կացութեան մէջ Մանիան միշտ նամակներ էր գրում, կանչում էր։ Այդ նամակները աւելի էին տանջում նրան.

—Այստեղ էլ Համլէտ. ամէն բան վերջացած է իմ եւ այդ կնոջ միջեւ. սէր, յարգանք, բայց չը կայ, պակասում է կամքը միանգամից կտրելու, ազատելու այս արհեստական կապից։ Ռուտին, այո Ռուտին, բայց նա գոնէ ֆրանսական յեղափոխութեան բարրիկադների վրա մեռաւ, ես ո՞ւր եմ մեռնելու. ճառ ճառ, ինքնադատափետում, ինքնա անալիզ, մինչեւ ե՞րբ. յաւիտեան անտանելի կեանք.. անձնասպան լինել մտածում էր Մարգավազովը արդէն Թիֆլիզ հասած իր բնակարանի պատշգամբի վրա շրջագայելով։ Պատշգամբը Կուրի վրա էր. գետը բարձրացել էր յորդ անձրեւների պատճառով ու հսկայական վիշապի նման մռնչալով կատաղած վայր էր վազում...

—Նետուել սրա մէ՞ջ, վերջ տալ այս կեանքին. որը միայն տանջանքի աղբիւր է ինձ համար. ներքին տանջանքի որ միայն ես եմ տեսնում եւ նրանք որոնք մարդկանց սրտերը թափանցել գիտեն։

Այդ չարագուշակ մտածութիւնները կարծես տիրապետելու վրա էին երբ տանտիրոջ տղան պատշգամբ եկաւ եւ նամակ յանձնեց։ Մարգավազով ջղաձգութեամբ նամակը պատռեց, Սիւսակեանից էր, ու սկսեց կարդալ

—Շուտ եկ, ընդհանուր ժողով է

Մէկը նարտի (թաւլու) է զարնում, մէկը թուղթ խաղում, երրորդը սուրճ խմում, և այլն...

Ցանկարծ ներս է մտնում պոչտոնեայ ցրուիչը. շատերը վազում են թերթը խլելու. Ստացողի գլխին հաւաքւում են և ընդհանուր հայեացք ձգում վերնագիրների վրայ, ապա կարդում այն՝ որը իրանց խորթ է թւում.

Առաջինը կարդում է. Նրա չորս կողմ հաւաքուած մարդկային կծող մեղրաճանճերը անմիջապէս բզզւում են ու նստում դու՛զ կարդացողի քթին, որի համար նա գոռում է կարդալուց.

Հասնում է երկրորդը. երեք տող դեռ չը կարդացած, ակամայից գցում է թերթը. ականջ պատռող խօսքերից. «Ո՛ւտ է. գրպարտութիւն է, ինքն է գրում միշտ...» և ինձ անհասկանալի է մնում. եթէ իրօք բոլորը սուտ են, ինչո՞ւ մեր պարոնները չեն գրում դոյա դէմ.

Կարդում է երրորդը, երեք բոպէ դեռ չանցած, համբերութեան բաժակը լցւում է դառն ծօյնով ու թափւում Սուլթան կարծեցեալ «Շարժում»-ի գլխին. Խեղճի թեւերը պատառոտուած, ուժասպառ ընկնում է յատակի վրայ.

Ինչո՞վ է մեղաւոր մի թերթը թուղթը, մնում է անբացատրելի. Գուցէ որճարանն է մեղաւոր. «Հա՛, մեծ ալբար, գուստն ա. սա՛».

Խօսելով այս կեղտոտ վարմունքի դէմ, ընկերներին յորդորում եմ այդքան քոյ և պատրաստ չլինեն անխօս թուղթը պատռելու. եթէ կռուի տեղ փնտռենք այդ չէ. իսկ եթէ պատասխանելու մի ձեւ, չլռենք.

Ցանկալի էր որ այդ տեսակ որ զայրոյթ հանաքներ էլ չլինէին.

Վանիկ—Մ.

2 Սեպտ.

Ֆիլիպէ

«ԴՐՕՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Ուղարկուած եւրոպական ժամուլին)

— —

Թիֆլիս, սեպտեմբերի 3

Զինւորական շրջանների մէջ յղացւում են խուլիգանական ծրագիրներ. Պետերբուրգից տրւած օրինակին հետեւելով Թիֆլիս. Պագու, Երեւան եւ այլ վայրերում սպանեւրի եւ այլ եւ այլ խմբակներ գաղտնի կամ բացարձակ. սպառնալիքներ են ուղղում հասարակութեան եւ մանաւանդ յեղափոխական շրջաններին: Շշուկներ կան որ զինւորներին եւ ոստիկաններին սովորեցնում են դաւեր սարքել հակակառավարչական անձանց եւ գործողների դէմ "Եթէ մի զինւորական զոհւի. մէկի տեղ տասն յեղափոխական կըսպաննենք» —այս է ահա նրանց ընդունած նշանաբանը. Թիֆլիսի զինւորական շտաբը այդ շարժման բոյնն է. եւ այնտեղից ցրւում են վերին աստիճանի կասկածելի հրահանգներ զօրանոցներին եւ նոյն իսկ ոստիկանական մարմիններին. Այդ դաւի մէջ մաս ունին «ռուս հայրենասէրների» սեւանուն խմբերը, որոնք գաղտնի ֆոնդերից նպաստ են ստանում եւ մինչեւ իսկ կանոնաւոր ռոճիկ.

— —

Թիֆլիս, սեպտ. 19

Միջազգային կռիւը շարունակւում է. Խատերսաբերդը Զանգեզուրն է. Թիւրք բէգերը եւ ագիդատորներ ը խելքի գալ չեն ուզում եւ շարունակում են խեղճ ամբոխը զոհել իրենց շահերին եւ մութ դիտաւորութիւններին: Կառավարութեան երկդիմի, մերթ թոյլ, մերթ գրգռիչ քաղաքականութիւնը անսանձութեանց դուռը լայն կերպով է բաց անել. Նոյնիսկ Պարսկաստանից բազմանգամ զինւած խմբեր են անցել՝ օգնելու Թուրք հրոսակախմբերին. Հայ յեղափոխական մարտախմբերը մի քանի անգամ խիստ դասեր աւեցին Թուրք յարձակւողներին. Դաւ փանի շրջանում աւելի քան տասն Թուրք գիւղեր են քանդւած. Լուր կայ որ Թուրք սպանուածների թիւը մի քանի հարիւրից անցնում է. Հայերի կողմից վնասւած են երկու գիւղ սպանւած են մինչեւ 30 մարդ. Թուրքերը այրեցին «Սիւնիք» պղնձագործարանը. Մանհետական ընակիչները փախուստ տւեցին դէպի Օրդուբաթի եւ Նախիջեւանի կողմերը. Տեղական իշխանութեան մի քանի անգամներ փոխեցին եւ նորերը նշանակեցին. Այդ նոր նշանակումները կասկածանքով եւ երկիւղով ընդունեցին տեղական ազդարնակութեան խաղաղ մասերի կողմից: Ցոյս կայ, որ Երեւանի նահանգում խաղաղութիւնը չը խախտւի. բայց այդ պիսի յոյս Գանձակի եւ Շուշու շրջանների վերաբերմամբ տարաբախտաբար, գոյութիւն չունի.

«Դրօշակ»

ՍԻՐՈՂ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ եւ ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆԸ

Ե.

-Պարոն, Սիրող, կարդացի՞ր Անդրանիկի կոչը. Տեսա՞ր մալըկատարեալ յեղափոխական դաշնակցական. կը յայտարարէ որ կուած միջոցնուն զէնք կը պոռան եղեր զէնք չէք հասցուցեր Իսկ միւս կողմէն ալ Վարդօն կը հաստատէ թէ՝ Սասունի կռիւէն տարի մը առաջ Դաշնակցութիւնը հարիւր հազարներով դրամ ունէր. Ինչի՞ չը ղրկեցիք.

— Զէնք վստահում եղբայր, մեզնից մարդ չը կար...

— Անդրանիկէն, Վահանէն, Հրայրէն ալ վստահելի մա՞րդ կուզէիք. զէնք չը կար, դրամ հասցնէիք. անոնք Թուրքերէն ալ զէնք կրնային առնել, ինչպէս Մշեցիները կառնեն եղեր.

— Թողէք Աստուած սիրէք. անցած բաների մասին ինչ էք խօսում. չէ՞ որ պէտք է «խալները չյիշել».

— Ցետոյ պարոն Սիրող Անդրանիկը կը դատապարտէ եւ եղբայրասպանութիւնը, նոր նշանաբան աւելցընելը Դաշնակցութեան դրօշակին վրայ, յետոյ ամեն հայու կը հրաւիրէ քով քովի գալ.

Ան ի՞նչ բան է. ասոր ինչ պիտի պատասխանէ՞ք. դատափետումներ ը նոյն են, ինչ որ Վարդոյինը եւ ուրիշներունը եղած է. Վարդոյին եւ ուրիշներուն համար կըսէիք թէ կաշառակերութիւն չունին անոնց ըսածները. իսկ Անդրանիկին ի՞նչ պիտի ըսէք. Կը զարմանամ թէ «Ռազմիկ ին խմբագրական մարմինը ի՞նչպէս համաձայնած է որ այդ կոչը տպագրուի «Ռազմիկ»ին մէջ.

Մզզսի միրայրը—Պիօնը արդեօ՞ք ինչ անքուն գիշերներ անցուցին մինչեւ այդ կոչին երեւան գալը. ու դեռ պիտի անցնեն...

—Էհ ինչ անենք. Անդրանիկին մերժել չէր կարելի յանկարծ նա էլ վեր կը կենար անկախօրէն կը հրատարակէր այդ կոչը. հիմա մնասը այնքան էլ շատ չէ. կոչը այն ձեւով է գրուած որ միամիտները չեն կարող հասկնալ որովհետեւ Անդրանիկը ուղղակի Դաշնակցութեան չէ հարւածում. թէեւ նա դատափետում է այն ինչ որ դաշնակցութեան թերութիւններն են.

— Աղէկ. սակայն «Շարժում»ը բացատրեց միամիտներուն համար, իսկ խելացիներն ալ կը հասկնան արդէն. բրաւօ Անդրանիկ. բացի քաջ ըլլալէ վիւէ եւ գրիչ բռնել ու բաւական ալ դիւանագէտ է.

«Ռազմիկ»ի միջոցով Դաշնակցութեան թերութիւնները դատափետել—մատնանշել կուռղները առանց զէնքի թողուլը. խարազանել եղբայրասպանութիւնը դիմել թէ՝ Դաշնակցականի. թէ՝ Հնչակեանի անանկ մարդոց քով որոնք Վարդօն ի խաչ հանել կուզէին երբ Հնչակեաններու ժողովին նախագահած կամ թէ անոնց մէկ գործիչի հետ համերաշխ ընթացած էր. Կատարեալ դիւանագիտութիւն է.

— Ինչ դիւանագիտութիւն եղբայր Անդրանիկը Սրիսհախն է ասում եւ տպագրել է տալիս. Միրայրի եւ այլների պէս մ՞ները միթէ՞ կարող են չը տպագրել.

— Էհ, լաւ, այդ այդպէս. կեցցէ Անդրանիկ ըսենք եւ այդ խնդիրը լմնցնենք. Սակայն այս քննադատութիւններուն պատասխաններուն տակը ինչո՞ւ ստորագրութիւ չը կայ. Ինչո՞ւ չը թողուցիք Միրայրին գրել... Ան աղւոր կը գրէր. Քննադատութիւնները տեղի կունենան գլխաւորաբ ը կազմակերպութեան Թուրքիոյ գործունէութեան մասին. անոնք եւեր են կովկասեան գործունէութեան պատմութիւնը կը գրեն. Կովկասեան գործերը պիտի երթային այնպէս, որովհետեւ ժողովուրդը ինքը տրամադիր էր դիմադրել... բայց այնտեղ ալ երբ դաշնակցական չէֆերը քիչ մը ինքզինքնին ուժեղ զգացին, խաղբութիւնը երեւան ելաւ..

— Ես էլ չեմ իմանում ճշմարիտն ասաց. աշխարհը ականու վրա է լինում, Տիարը այնտեղից է ավվոցը

պահանջվում, Վարաժեան եւ ուրիշներ այստեղ են թափվել. գրեթէ բոլորի ընդհանուր ժողով են ուզում.

—Լաւ որ պահանջում են. պէտք է գումարել, այդ տեղ ես մի գործ յանձն կառնեմ, փոխանակ թոյլ մարդի նման անձնասպան լինելու, պատւով կը մեռնեմ Ռուդինի պէս, ա. ո. Ռուդինի.

Ու առանց այլեւայլութեան իրեղէնները հէնց այդ ժամին կապել տալով հեռացաւ Թիֆլիզից.

ԳԼՈՒԽ Զ.

Անցել էին ամիսներ. Թրքական Բ. քաղաքում տեղաւորվել էին մի քանի հայ պարոններ. քաղաքի զանազան եւ արիստօկրատ թաղերում Դրանց մէջ կար և մի ծերունի. Նրանք ապրում էին իբրեւ զբօսաշրջիկներ. իրար հանդիպում էին զբօսավայրերում ճաշարաններում. ոչ ոք գիտէր որ դրանք հայեր էին: Խօսում էին Ռուսերէն ֆրանսերէն. Ծերունին Մարդավազօն էր. Նա եկել էր մի կարեւոր գործ կատարելու, որի իրագործման ինքն էլ չէր հաւատում. բայց պէտք էր կատարել. պէտք էր Ռուդինի փառաւոր վերջը ունենալ ու այդ վերջով արդարացնել ներել տալ երկար տարիների Համլէտութիւնը. Դաւաճանութիւնը իրօք վտանգաւոր էր ու Մարդավազը հաստատօրէն որոշել էր անձամբ ուղղակի մասնակցել. Դործը քանի պատրաստվում էր նա այնքան ոգեւորվում էր. այնքան մտնում իր ստանձնած դերի մէջ.

Տովի ափին զբօսնած միջոցին երբեմն նրա նորը չի թուղթների վրա խաղում էր ինքնագոհ ժպիտը: Նա մտմտում էր— վերջապէս հասայ այն վայրկեանին երբ ես էլ հասկացայ թէ՝ ինչ է զգացումների, տրամադրութիւնների եւ հոգի ներդաշնակութիւնը. Շուտով կը լինի.. բայց Վահա՞նս, Մանիան ի՞նչպէս պէտք է մեծացնէ նրան.

Ոհ, մայր արարած, շատ բորդ բան ես եղել. զաւակ հայրենիք, կին, մէկը միւսի եաեւից գրոհ են տալիս քեզ վրա, իրենց պահանջներով. խլում են անկախութիւնը կաշկանդում քո ամեն թռիչքը. Բայց միթէ ուրիշներն էլ մարդիկ չե՞ն. Նրանք ինչպէս են այդ բազմակողմանի զրոհների տակից ազատել իրենց թռիչքները. Չէ. թող չուտ լինի—ժամանակ է, ժամանակ չէ թող լինի.. վերջապէս գտնելու եմ ես իմ հոգեկան հանգստութիւնը, իհարկէ եթէ ողջ մնացի. հապա Վարաժեանի ծաղրական ժպիտնե՞րը. Նրանք այլեւս գին չեն ունենալու ինձ համար, էլ չեն տանջելու ինձ. Վահան, Մանիա ինչ ուզում են թող լինեն. վերջապէս ես էլ պէտք է երեւան գամ, ինչ որ եմ իմ մտքով, խօսքով. Ներդաշնակօրէն. քան տարի խօսել մէկ օր, մէկ վայրկեան խօսածը գործի վերածել դա արդէն ամեն ինչ արժէ. դա մի սրբագրութիւն կլինի Համլէտական կեանքի, որի առջեւ կը խոնարհի ամեն բան. Միայն երանի չուշանար...

(Շարունակելի)

ընկել—համերաշխութիւն. ուժերի միութիւն է պէտք մեզ. Անդրանիկը այստեղ է պահանջում. ինչպէս երեւում է իրօք մեր գործերը այնքան էլ փայլուն չեն...

— Ես ալ կը տեսնամ որ փայլուն չեն. չէֆերու, սիրողներու օրհասը մօտեցած կերեւի։ Կովկաս վարկերնիգ ինկաւ. քանի որ բոլոր թերթերը ձեզ դէմ են. ձեր ուղղութիւնը սխալ կը ճանչնան ձեր չէֆերը կեղծ, վախկոտ մարդիկ կընգունին. այլևս ձեզի փարա չեն տար։ Տաճկահայ յեղափոխականները ուզած չուզած զձեզ պիտի զոհաբերեն. որովհետեւ առանց Կովկասի օգնութեան տաճկահայ յեղափոխական գործը յարատեւել չի կրնար Պոլսոյ գործիչներէն մին Կովկաս վազեր էր. քիչ մըն ալ հոն օր անցնելու. սպրդ պէտք է ետ. նորէն Պուլկարիա վերադարձաւ... բայց կը վախնամ մասնաւոր դպրոցին ալ փորձանք մը պատահի.... փարա ղրկող չկայ. ի՞նչ կը կարծէք, փարան դադրելէն յետոյ Պէօնը նոյնէն եռանդով սիրող յեղափոխական մը պիտի մնա՞յ, թէ ատկէ ալ պիտի հրաժարի՞....

— Դրանց մասին հիմա մտածող չը կայ. ամէն մարդ իր գլխի վրա է մտածում....

ԱՍԵՂ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հայոց կաթողիկոսի կոնդակով գումարուած կենտրոնական ժողովը, հազիւ տասն օր տեւելուց յետոյ, փակեց կառավարութեան ձեռքով։ Վաղարշապատի ոստիկանութեան ներկայացուցիչը պահանջեց պատգամաւորներից ստորագրել հետեւեալ թուղթը. „Մենք, ներքեւ ստորագրողներս, տալիս ենք այս ստորագրութիւնը Էջմիածնի կենտրոնական ժողովի փակման մասին՝ մեզ յայտարարուած է և մենք պարտաւոր ենք 24 ժամուայ ընթացքում, ազմինիստրատիւ կերպով ուղարկուելուց խուսափելու համար, հեռանալ Էջմիածնից մեր բնակավայրերը և այսեղից գնալուց յետոյ, օրինական պատասխանատուութիւնից խոյս տալու համար, չը ստորագրել այլևս ոչնչ խորհրդաժողով“. Պատգամաւորները ստորագրեցին հետեւեալ բացատրութեամբ. „Այս ստորագրութիւնը տալով բողոքում ենք այդ կալզաղրութեան դէմ, որը խախտում է իւրաքանչիւր քաղաքացու անյողդողդ իրաւունքները, խօսքի և ժողովի ազատութիւնը, ինչպէս և բռնաբարում է իւրաքանչիւր ժողովրդի իրաւունքները, որը մրակ կարգադրիչն է իր ազգային կուլտուրական գործերի“։

— Անցեալ կիրակի Վառնայի եկեղեցիին մէջ Կաթողիկոսի պատուիրակ Տաճատ վարդապետի ներկայութեանը Տէր Մարտիրոս հայրը կարդացեր է կաթողիկոսին կոնդակը։ Առաջնորդականն խնդրի մասին. ոմանք կարծիք յայտներ են որ հին պատգամաւորները հաւաքուի ընտրութիւնը կատարելու. ոմանք ալ պահանջեր են նոր ընտրութեանց ձեռնարկել։ Այդ հարցը դեռ առկախ մնացած է։

Տաճատ վարդապետ օկեղեցականներու կալուածներու գրաւման մասին յայտարարած է որ դիմադրութիւնը ինքնաբերաբար ժողովրդին կողմէն եղած է. և ընդհակառակը Երեւանի շրջանի դաշնակցական պետը խորհուրդ տուած է չը գիմադրել։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ կիրակի Իշխանը եկաւ Վառնայի մօտ գտնուած իր էվքսինօկրաս պալատը։ Նոյն օրը „պուլկար սղգասէրները“ դրօշակով և մուզիքով դրաւեցին յունական երեք եկեղեցիներառանց ոեւէ բուռն միջոցի դիմելու։ Երկուշաբթի օրը կառավարութեան հրամանով այդ եկեղեցիները վերադարձուեցան յոյներուն և „սղգասէր“ ընկերութեան զեկավարներէն և անդամներէն բազմաթիւ մարդիկ ձերբակալուեցան.

— Պուլկար կառավարութիւնը Ռումէն կառավարութենէն հրաւէր ընդունած է մասնակցիլ Պուքրէշի ազգային ցուցահանդէսին, որ պիտի տեւէ տարի մը և միջազգային ցուցահանդէսի պիտի վերածուի։

— „Սղգասէր“ներու կենտրոնական կոմիտէն Սոֆիայի մէջ գռնափակ ժողով մը ունեցեր է ամսոյս 24ին. ճաշէն վերջն ալ բաց ժողով մը պիտի ունենար բողոքելու համար Վառնայի իշխանութեանց դէմ, ձերբակալութիւններուն համար։

— Պուլկարական ամբողջ ամբոխը կղզիի Նաչեիչին, Պոլսոյ ներկայացուցչին, յանկարծակի պաշտօնը ձգել հեռանալու խնդրով։

Կառավարական օրգանները Նաչեիչը կը դատապարտեն իր այդ քայլին համար։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Քանի մը օտար թերթերը կը հաղորդեն թէ Եւրոպի շրջանակներուն մէջ վերջերս կը տիրապետէ այն կարծիքը՝ որ իշխանի և Նէյիպ Մէլհամէի իրարու հանդիպելէն վերջը Պուլկարիոյ և Թուրքիոյ յարաբերութիւնները բարեկամական ուղղութիւն պիտի ստանան։ Իբր փաստ այդ նոր ուղղութեան „Վէյէրնա Բոշթան“ կաւելցնէ թէ Սոֆիայի Ներկայացուցիչը՝ Մատրք. փաշա տեսակցութիւն ունեցեր է նախարարապետ Բեթիլոֆին հետ։ Սոֆիայի շնորհակալութիւնը յայտնելու իր ծրագրեան սոթիւ պուլկար կառավարութեան կողմէն եղած պատիւներուն համար։

ՌՈՒՍԻԱ

Հելսինֆորքսէն կը հաղորդեն որ հոն հաւաքուած են կադէտներու 200 ի չափ պատգամաւորներ ժողով դաւմարելու համար, վիճաբանութիւնները դռնափակ պիտի տեղի ունենան։

— Վերջին օրերս կառավարութիւնը քանի մը անձերու թոյլատրած է փոխանակ հիւսիսային նահանգները աքսորի երթալու, անցնիլ արտասահման, միայն այն պայմանով որ երկու տարի շարունակ Ռուսիա չը պիտի վերադառնան։

— Պելլինեան թերթ մը կը հաղորդէ որ նախարարական ժողով մը ցարին նախագահութեամբ, որոշած է եկող չորքուն յայտարարել Տումայի ընտրութիւններուն թուականը։

— Անգլիական երեսփոխաններու յանձնախումբը որ եկած էր իր ուղերձը մատուցանելու ռուս նախկին Տումայի Մոսկուա պիտի երթայ նախկին նախագահ Մուրոմցևը տեսնելու Մոսկվայի վ ճառականները պարսային սրահը առաջարկած են այդ հանդէսին համար։

ՖՐԱՆՍԱ

Արմատակ ներու և ընկերվարականներու գործադիր կոմիտէները կը յայտարարեն որ եկեղեցին պետութենէն բաժանման օրէնքը պէտք է գործադրել առանց ուշադրութիւն դարձնելու Վատիկանին վրա ոեւէ համաձայնութեան մը գալու։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Սեպտեմբեր 24ին Թէհրանէն կը հեռագրեն հետեւեալը. պարսկական բարլամանը բացուեցաւ Շահի և դիւանագիտական մարմնոյն ներկայութեանը։

Տեսնանք Ցարը օրինակ պիտի առնէ՞ իր Արեւելքի Մահմետականներուն։

ՃԱՓՈՆԻԱ

Ճաբոնական կառավարութիւնը պատերազմական մեծ պատրաստութիւններ կը տեսնայ, մանաւանդ պատերազմական նաւերու թիւը կաւելցնէ. կը կարծուի թէ Չինաստան պիտի խուժէ։

ԳԵՂՈՒՆԻ

ԻՆՉԱՍՏ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐՈՒՆ

Գեղունի իր ծանօթ ծրագրով, իրեն յատուկ գեղարուեստական եւ կրական բովանդակութեամբ հրատարակուած է Կովկասահայ մեծ գանգուածը փութկոտօրէն սփոիեց արկածեալ թրքահայը. հիմա ինքն է լացողը, ինքն է վիրաւորվածը, եւ ինքն է սովի եւ կրակի մատնուածը այդ մեր հայութեան ամենէն ազնիւ զաւակներուն հիմա ձեռք կուտայ ԲԱՐԵԳՈՐԾՈ ԹԻՒՆԸ. ձեռնպահ չի մնար եւ Գեղունին որ Կովկասահայուն սրտին մէջ համակրանքի բաւին մուտնի։ Ամ Դ.ազար 1000 օրինակ այս նոր Գեղունիէն (1906) յղեց Թիֆլիզի ի նպաստ Կովկասահայ արկածեալներու յանձնաժողովին. ընդանուր հայութեան այն ամէն անհատ ու տաղապեալներու գանձանակին մէջ՝ համեստ լումայ մը 10 ֆր. նետելու կարողութիւնն ունի, ցանկալի է որ դիմէ այդ յանձնաժողովին, ուսկից փոխարէն իր բարեգործութեան, կը ստանայ նոր հրատարակուած Գեղունին. որուն կատարելութեանը համար թերթին մի եւ նոյն վարչութիւնը ամէն ճիգ ու ջանք թափած է եւ աւելի եռանդով։

Գեղունիի բաժնեգինն է 10 ֆրանկ։

Մեր հասցէն է՝ ԷՄԲՐԻՄԸՐԻ ԱՐՄԷՆԻԷՆ ՍԹ. ԼԱԶԱՐ

ՎԸՆԻՍ (Իթալիա)

„ՆՈՈ–ՀԱՆԴԷՍԸ“

Նախաձեռնուած ըլլալով Փարիզի Հ. Յ. Դ. Ուսանողական Մարմնի կողմէն, „Նոր—Հանդէսը“ պիտի ջանայ ծանօթացնել հայոց մասին օտար լեզուով լոյս տեսած կարեւոր աշխատութիւնները եւ ամփոփ տեղեկութիւններ եւ տեսութիւններ ամբողջ միջազգային հասարակական եւ քաղաքական այժմէութիւններու եւ եւ մասնաւորապէս հայկական հարցի եւ կեանքի իրականութեան մասին։

Խմբագրութեան հասցէ՝

6 Ռիւ Պէրթիոլ. 6 Բարիզ (Ֆրանսա)

„ԱՐՄԻԻ“

Կիսամսեայ

Ազգային, Գրական, Քաղաքական

Տարեկան բաժնեգին է մէկ տոլար Ամերիկայի, 6 ֆրանք արտասահմանի համար։

Դիմել հետեւեալ հասցէին՝

Էտիթոր օֆ „Արծիւ“ Բ. Օ. Պօքս 2191, Պոսթոն Մաս

ԱՂԱՍԻ

Զէյթունի հերոսներու գիւցազներգութիւն, հինգ արարուած, եօթը պատկեր։

Դիմել հեղինակին՝ փոսթ ռէսթանթ, Գահիրէ, Եգիպտոս

Գին Ֆր. 1 50

Печатница на П. Глушковъ С Вар